ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

SAINT GREGORY THE ILLUMINATOR
MEDICAL CENTER

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓԲԸ-Ի

ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ

Հաստատում եմ
«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ
պետական բժշկական քոլեջի
տնօրինական խորհրդի նախագահ՝
_____Ռ. Սարգսյան
« 12 » 09. 2025թ

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԿ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2025

1. ՆԱԽԱԲԱՆ

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ պետական բժշկական քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) Ռազմավարական զարգացման ծրագրի (այսուհետ՝ ՌԶԾ) իրականացման մշտադիտարկումը, գնահատումը և վերանայումը հանդիսանում են հաստատության որակի ներքին ապահովման համակարգի և արդյունավետ վարչարարության առանցքային գործիքները:

Այս գործընթացն ապահովում է Քոլեջի գործունեության համապատասխանությունը իր առաքելությանը և սահմանված թիրախային արդյունքներին:

ՌԶԾ-ն հանդիսանում է Քոլեջի զարգացման համապարփակ հայեցակարգ, որի նպատակն է ինստիտուցիոնալ կարողությունների հզորացումը և առողջապահության ոլորտի արդի պահանջներին համահունչ, մրցունակ միջին մասնագիտական կադրերի պատրաստումը:

ՌԶԾ-ի իրականացման արդյունավետությունը երաշխավորվում է հետևյալ սկզբունքներով.

1. ՌԶԾ-ի ընթացիկ կամ երկամյա գործողությունների գնահատումը հիմնվում է օբյեկտիվ տվյալների և վիճակագրական վերլուծությունների վրա:
2. Յուրաքանչյուր ռազմավարական նպատակի իրագործումը չափվում է նախապես սահմանված գնահատման առանցքային ցուցիչների (ԳԱՑ/KPI) միջոցով, որոնք թույլ են տալիս քանակապես և որակապես արձանագրել արձանագրված առաջընթացը:
3. Մշտադիտարկման արդյունքները հիմք են հանդիսանում Քոլեջի գործառույթների շտկման, ռեսուրսների վերաբաշխման և ռազմավարական պլանավորման հաջորդական փուլերի արդիականացման համար:

2. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՌԶԾ-ի մշտադիտարկումն իրականացվում է հետևյալ հիմնական հարցադրումների պարզաբանման նպատակով.

- Նպաստում են արդյո՞ք իրականացվող գործողությունները Քոլեջի առաքելության՝ մրցունակ և բարձրակարգ միջին բժշկական անձնակազմի պատրաստմանը:
- Համապատասխանում է արդյո՞ք իրականացվող ռազմավարությունը առողջապահական համակարգի արդի մարտահրավերներին և ԲԿ-ի կլինիկական փորձին:

- Արդյո՞ք ընտրված ռազմավարությունը համապատասխանում է Քոլեջի կադրային ներուժին և ԲԿ-ի ընձեռած նյութատեխնիկական հնարավորություններին:

3. ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Գնահատումն իրականացվում է Քոլեջի կամ ամբողջ գործունեության մակարդակով, կամ առանձին գործունեության համար՝ օգտագործելով հետևյալ գործիքները.

1. **SWOT վերլուծություն:** Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և ռիսկերի պարբերական վերանայում:
2. **Հարցումներ և ֆոկուս-խմբեր:** Ներքին (ուսանողներ, դասախոսներ) և արտաքին (գործատուներ, հատկապես ԲԿ-ի բաժանմունքների վարիչներ) շահակիցների բավարարվածության գնահատում:
3. **Ինստիտուցիոնալ ինքնավերլուծություն:** Քոլեջի գործունեության համապատասխանեցում պետական հավատարմագրման 10 չափանիշներին:

4. ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

1. Վերանայումը պետք է լինի հիմնավորված փաստերի և շահակիցների կարիքների բացահայտման արդյունքների վրա:
2. Վերանայման արդյունքում կարող են կատարվել լրամշակումներ կամ բովանդակային փոփոխություններ, որոնք հաստատվում են Տնօրինական խորհրդի կողմից:
3. Յուրաքանչյուր ռազմավարական նպատակի համար (կրթության որակ, ենթակառուցվածքներ, որակի ապահովում, արտաքին կապեր) սահմանված են հստակ ժամկետներ և պատասխանատուներ:

5. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

1. **Ուսանողներ:** Մասնակցություն հարցումներին և որակի բարելավման գործընթացներին:
2. **Դասախոսական և վարչական կազմ:** Քննարկումներ Մանկավարժական և Տնօրինական խորհուրդներում:
3. **Գործատուներ (ԲԿ):** Քոլեջի՝ որպես ԲԿ-ի կառուցվածքային ստորաբաժանման, հաշվետվողականության ապահովում ԲԿ-ի տնօրինությանը: